Բ. Բ. ՊԻՈՏՐՈՎՍԿԻ

1990 թ. հոկտեմբերի 15-ին, երկարատև հիվանդությունից հետո վախճանվեց ԽՍՀՄ և Հայաստանի ԳԱ ակադեմիկոս, ԽՍՀՄ ԳԱ նախագահության անդամ, սոցիալիստական աշխատանքի հերոս, ՌԽՖՍՀ կուլտուրայի և ՀԽՍՀ գիտության վաստակավոր գործիչ, ԽՍՀՄ պետական մրցանակի դափնեկիր, պետական էրմիտաժի դիրեկտոր Բորիս Բորիսի Պիոտրովսկին։

Բ. Բ. Պիոտրովսկին ծնվել է 1908 թ. փետրվարի 14-ին, Պետերբուրգում, մտավորականի ընտանիքում։ Միջնակարգ դպրոցն ավարտելուց հետո՝ 1925 թ., ընդունվում է Լենինգրադի պետական համալսարանի և 1930 թ. ավարտում է նրա պատմա-լեզվագիտական ֆակուլտետը։ 1930 թ., դեռևս համալսարանը չավարտած Բ. Բ. Պիոտրովսկին աշխատանքի է ընդունվում Նյութական մշակույթի պատմության պետական ակադեմիայում, իսկ 1931 թ.՝ պետական էրմիտաժում։ 1930 թ. և հաջորդ տարիներին նա էրմիտաժի աշխատակիցներ Լևոն Գյուզալյանի և Անտոն Հայլյանի հետ գործուղվում է Հայաստան և ուսումնասիրում է Սևանի ու Արագածի կիկլոպյան ամրոցները։ 1939 թ. սկսվում են Հրազդանի ափին գտնվող Թեյշեբաինի (Կարմիր բլուր) քաղաքի պեղումները ԽՍՀՄ ԳԱ Հայկական մասնաճյուղի հնությունների պաշտպանության կոմիտեի և պետական էրմիտաժի համատեղ ուժերով՝ Բորիս Պիոտրովսկու, Կարո Ղաֆադարյանի և Սմբատ Տեր-Ավետիսյանի ղեկավարությամբ։ Կարմիր բլուրի պեղումները, որոշ ընդհատումներով (կապված Հայրենական պատերազմի հետ), շարունակվեցին մինչև 1967 թ.։ Թեյշեբաինիի պեղումներով, որոնք հետպատերազմյան տարիներին ղեկավարում էր Բ. Բ. Պիոտրովսկին, պարզաբանվեցին Հայաստանի պատմության և նյութական մշակույթի հետ կապված շատ հարցեր։

Կարմիր բլուրի առաջին շրջանի պեղումների արդյունքներն ամփոփվեցին ՀԽՍՀ ԳԱ հրատարակչությամբ լույս տեսած երեք պրակներով՝ 1950, 1952 և 1956 թվականներին։ Լենինգրադում լույս տեսավ «Կարմիր բլուր» պոեմը, որտեղ շքեղ լուսանկարների միջոցով ներկայացված են Թեյշեբաինիից հայտնաբերված ամենաբարձրարվեստ իրերը։

Պատերազմի առաջին տարիները Բորիս Պիոտրովսկին անցկացրեց պաշարված Լենինգրադում։ Հովսեփ Օրբելու գլխավորությամբ նա գործուն մասնակցություն ունեցավ էրմիտաժի արվեստի ու մշակույթի գանձերի փրկման աշխատանքներում։ Երբ էրմիտաժի նյութերը ուղարկ-

վերջին թիկունք, նա Հովսեփ Օրբելու և մի քանի այլ աշխատակիցների հետ տեղափոխվեց Երևան։ Այստեղ նա ավարտեց իր հայտնի «Ուրարտուի պատմությունն ու մշակույթը» մենագրությունը, որը 1944 թ. պաշտպանեց որպես դոկտորական դիսերտացիա։ Նույն գրքի համար 1946 թ. նրան շնորհվեց ԽՍՀՄ պետական մրցանակ։ Նոր նյութերով հարստացված ու վերաշարադրված այս դիրքը 1959 թ. վերահրատարակվեց՝ «Վանի թագավորությունը» խորագրով։ Փաստորեն այս գրքի շարունակությունն է կազմում Բ. Բ. Պիոտրովսկու հաջորդ մենագրությունը՝ «Ուրարտուի արվեստը»։ Բ. Բ. Պիոտրովսկու աշխատությունները մեծ նշանակություն ունեն ինչպես Հին Արևելքի, այնպես էլ Հայաստանի պատմության ու մշակույթի ուսումնասիրության համար։

1960-ական թթ. սկզբին Բ. Բ. Պիոտրովսկին ընդգրկվում է եգիպտական հուշարձանների փրկման աշխատանքներում (Ասուանի շրջանի կառուցման կապակցությամբ) և 1961—1963 թթ. ղեկավարում է խորհրդային հնագիտական արշավախմբի գործունեությունը Նեղոսի հովտում։ Այդ աշխատանքների արդյունքներն ամփոփվեցին «Հին Նուբիա» գրքում։

Գիտական աշխատանքին զուգահեռ Բ. Բ. Պիոտրովսկին զբաղվել է և գիտակազմակերպչական գործունեությամբ. երկար տարիներ եղել է պետական էրմիտաժի դիրեկտորի գիտական գծով տեղակալ, ԽՍՀՄ ԳԱ հնագիտության ինստիտուտի Լենինգրադյան բաժանմունքի վարիչ, Լենինգրադի պետական համալսարանի Հին Արևելքի պատմության և բանասիրության ամբիոնի վարիչ։ 1964 թ. սկսած, անընդհատ, նա էրմիտաժի դիրեկտորն էր։ Բորիս Պիոտրովսկու ղեկավարությամբ էրմիտաժը նոր հաջողություններ ունեցավ գիտական և կուլտուր-լուսավորական աշխատանքների բնագավառում։ Այս նույն տարիներին էրմիտաժը դարձավ արտասահմանյան երկրների հետ մշակութային կապերի խոշորագույն կենտրոն։ Մեծ է եղել Պիոտրովսկու դերը գիտական կադրերի՝ հնագետ-մասնագետների պատրաստման բնագավառում, առավելապես Հայաստանի համար։ Կարմիր բլուրի հնագիտական դպրոցը անցած կամ Բ. Բ. Պիոտրովսկու ասպիրանտները եղած շատ մասնագետներ աշխատում են այժմ հանրապետության գիտական ու մանկավարժական տարբեր հաստատություններում։

Բորիս Պիոտրովսկու, այդ լուսավոր մարդու մահը մեծ կորուստ է գիտության համար։